

**01/10.1/3806-09**  
**2009-06-11**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

#### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հակոբ Հակոբյանի, Արթուր Աղաբեկյանի, Սուքիաս Ավետիսյանի, Արա Բաբոյանի, Արմեն Աշոտյանի, Անահիտ Բախշյանի և Լյովա Խաչատրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Համաձայն «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ «Հայաստանի ազգային հերոս» կոչում շնորհված կամ «Մարտական խաչ» շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքին նպաստ

ստի տրամադրման համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Նախագահի «Հայաստանի ազգային հերոս» կոչում շնորհելու կամ «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրելու մասին հրամանագիրը: Նախագծով առաջարկվող փոփոխության արդյունքում որևէ այլ երկրի ազգային հերոսի (հետմահու շնորհված) կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքները Հայաստանի Հանրապետությունում ձեռք կբերեն նպաստի իրավունք:

Հարկ ենք համարում նշել, որ նախագծով նախատեսված շահառուների շրջանակի ընդլայնումը կհանգեցնի լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության:

Այսպես, «Արցախի հերոս» բարձրագույն կոչմանը հետմահու արժանացած 6 անձանց ընտանիքներից 2-ը նաև Հայաստանի ազգային հերոս են, իսկ 1-ը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հրամանագրով Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրվել են 90 Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնցից 26-ը պարգևատրվել են նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով, և նրանց ընտանիքներն արդեն իսկ ստանում են (կարող են ստանալ) գոհված՝ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի նպաստ:

Այսպիսով՝ «Զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի նպաստ» ծրագրից լրացուցիչ կօգտվեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների 65 ընտանիք, որից 1-ը՝ Արցախի հերոսի, 5-ը՝ առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշանով, իսկ 59-ը՝ երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշանով պարգևատրվածի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հրամանագրով պարգևատրված անձանց ընտանիքների նպաստի վճարման համար տարեկան լրացուցիչ կպահանջվի **83,8** մլն դրամ (նպաստի **2009**

թվականի համար սահմանված չափով հաշվելու դեպքում՝ ներառյալ վճարման ծառայության ձեռքբերումը):

Բացի այդ, առաջարկվող փոփոխությունների ընդունման դեպքում «Զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի նպաստ» ծրագրից լրացուցիչ կարող են օգտվել ոչ միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հրամանագրով պարգևատրված 65 Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտանիքները, այլ նաև՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի համարվող, զոհված՝ Արցախի հերոսի՝ 4 և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձանց՝ 311 ընտանիքները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 20-ի «Զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի վճարման կարգը հաստատելու մասին» N 255-Ն որոշմամբ սահմանված է, որ դիմողի ցանկությանը նպաստը կարող է վճարվել անկանխիկ՝ նրա նշած բանկային հաշվին դրամական փոխանցմամբ: Նշված 315 ընտանիքներից որևէ մեկի՝ ընդամենը մեկ-երկու ամիս Հայաստանում փաստացի բնակվելու հանգամանքը կարող է բերել նրանց նպաստի վճարման՝ նպաստի իրավունքի սահմանված ժամկետներով (զոհվածի այրու և ծնողի համար՝ ցմահ): Իսկ նրանց՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բնակվելու պարագայում՝ այլ հավասար պայմաններում այդ ընտանիքների նպաստի իրավունքը չի ճանաչվելու և խնդիրը մնալու է չլուծված:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Գևորգ Պետրոսյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-605-28.04.2009-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին**

**Հոդված 1.** «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի «դ» կետի, 4.1-րդ գլխի վերնագրի, 24.1-րդ եւ 24.2-րդ հոդվածների վերնագրերի եւ տեքստերի «Զուգված՝» բառից հետո «Հայաստանի» բառը հանել:

**Հոդված 2.** Օրենքի 24.2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) ազգային հերոս կոչում շնորհելու կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրելու մասին հրամանագրի պատճենը.».

2) 4-րդ մասի 1-ին կետում «հետմահու «Հայաստանի ազգային հերոս» բառերը փոխարինել «հետմահու ազգային հերոս» բառերով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:

**Հիմնավորում**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման  
անհրաժեշտության**

Նախագծով առաջարկվում է սոցիալական աջակցության հավասար պայմաններ սահմանել Արցախյան ազատամարտում զոհված՝ ազգային հերոսների, ինչպես նաև Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքների համար: